«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ, ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

----------Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«20» ապրիլի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կարլեն Արմենի Մարգարյանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման հասանելիության բարելավման խնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Լիլիթ Սարգսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Քրիստինե Բաղդասարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Սվետլանա Դալլաքյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Տաթևիկ Փարսադանյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Բելլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Եվգենյա Հակոբյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը աշխարհի շատ երկրներում բախվում է տարբեր խնդիրների, որոնք խոչընդոտում են ՓՄՁ-ների բնականոն գործունեությանը և զարգացմանը, ինչն իր հերթին հնարավորություն չի տալիս լիարժեք իրացնել ՓՄՁ ոլորտի ողջ ներուժը: Մի շարք ուսումնասիրություններ փաստում են, որ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի վրա բացասական առումով առավել մեծ ազդեցություն են ունենում ֆինանսների հասանելիության խնդիրները (ուսումնասիրված գրականությունում

երբեմն կիրառվում է նաև ֆինանսական ռեսուրսների «մատչելիություն» տերմինը, որը մեր աշխատանքում նույնացված է «հասանելիության» հետ):

Զարգացող երկրներում ֆինանսների հասանելիությունը համարվում է ՓՄՁ-ների գործունեության կարևորագույն պայման՝ արտադրական հզորությունների ստեղծման, մրցակցության խթանման, աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման համատեքստում: Առանց ֆինանսավորման, ՓՄՁ-ները չեն կարող ձեռք բերել և ներդնել նոր տեխնոլոգիաներ, գործնական հարաբերություններ հաստատել ավելի խոշոր ընկերությունների հետ:

ՀՀ ՓՄՁ ոլորտը անմասն չէ համաշխարհային միտումներից: Վերջին տասնամյակի ընթացքում մեր երկրում իրականացված տարբեր հարցումներն ու հետազոտությունները մշտապես արձանագրել են (դրանց մանրամասն անդրադարձ է կատարվել աշխատանքում), որ ֆինանսների հասանելիության բարդություններն առկա են նաև ՀՀ-ում գործող ձեռնարկությունների շրջանում, իսկ համաձայն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակվող «Համաշխարհային մրցունակության զեկույց 2017-2018»-ի՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները արդեն դարձել են ՀՀ-ում գործարարության վարման թիվ մեկ խոչընդոտը: Ուստի, ՀՀ ՓՄՁ ոլորտի զարգացման պետական քաղաքականության շրջանակներում առաջնահերթ կարևորություն է ստանում ՓՄՁ-ների ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավման միջոցառումների իրականացումը՝ առկա ֆինանսական միջոցների բացի (ճեղքվածքի) կրճատման և ֆինանսապես սահմանափակված ՓՄՁ-ների թվի նվազման նպատակով:

Այսպիսով, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ խնդիրների առավել խորը և համապարփակ ուսումնասիրության կարևորությամբ, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման հասանելիության առկա խնդիրների լուծման առաջարկների և համալիր գործիքակազմի մշակման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման

հասանելիության բարելավման ուղղությունների մշակումն ու առաջարկումն է, որի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ժամանակակից տնտեսական կյանքում փոքր և միջին ձեռնարկությունների դերն ու նշանակությունը,
- Հետազոտել ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության էությունն ու կարևորությունը,
- Դիտարկել արդի ժամանակահատվածում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական խնդիրները,
- Ուսումնասիրել փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման արտաքին աղբյուրների կառուցվածքը,
- Վերլուծել ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի դինամիկան և կառուցվածքը,
- Քննարկել ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին, մասնավորապես՝ բանկային ֆինանսավորման առկա հնարավորությունները և պայմանները,
- Ուսումնասիրել ՀՀ ֆինանսական կազմակերպությունների և ՓՄՁ ոլորտին աջակցող կառույցների միջև համագործակցությունը և գնահատել վերջինիս արդյունավետությունը,
- Վերլուծել և գնահատել ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության արդյունավետությունը՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավման համատեքստում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտն է: Հետազոտության առարկան ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության արտաքին, մասնավորապես՝ բանկային ֆինանսավորման հասանելիության խնդիրների բացահայտումն է՝ ոլորտի բարելավման ուղղությունների մշակման նպատակով:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության ընթացքում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել կապիտալի կառուցվածքի հիմնական տեսությունների հիմնադրույթները, ինչպես նաև հայազգի և արտասահմանյան հետազոտողների կողմից կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել փոքր և միջին ձեռնարկատիրությունը կարգավորող ՀՀ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ Վիճակագրական կոմիտեի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի, տարբեր միջազգային կառույցների (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Համաշխարհային բանկ, Եվրամիություն և այլն) հրապարակումները, պաշտոնական նյութերն ու վիճակագրությունը: Հետազոտությունն իրականացվել է փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման հասանելիության բնագավառում արտասահմանյան հեղինակների աշխատությունների, տարբեր միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունների համակողմանի վերլուծության հիման վրա: Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, տնտեսավիճակագրական, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետազոտության շրջանակում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված հետևյալ արդյունքներով.

- Հաշվի առնելով ՀՀ ֆինանսական շուկայի զարգացման արդի միտումները և ՓՄՁ ֆինանսական ռեսուրսների հասանելիության հիմնական խոչընդոտները՝ մշակվել է ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման համալիր գործիքակազմ,
- Ոլորտի համալիր ուսումնասիրության արդյունքում մշակվել են ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին, մասնավորապես բանկային ֆինանսավորման նորարարական գործիքների զարգացումը սահմանափակող արդի խնդիրների լուծման ուղղությունները,
- Պետական գնումներին մասնակցող ՓՄՁ-ներին բանկային երաշխիքների և ֆինանսավորման տրամադրման մեխանիզմների կատարելագործման նպատակով մշակվել և ՀՀ բանկային համակարգում ներդրվել է ֆինանսավորման նոր պրոդուկտ, որը նախատեսում է երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափերի նախահաստատում՝ առանց անշարժ գույքի գրավադրման:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Հետազոտության շրջանակում մշակված և ներկայացված առաջարկություններն ու մոտեցումներն ունեն գործնական էական նշանակություն և կարող են կիրառվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի և ՀՀ այլ շահագրգիռ պետական գերատեսչությունների կողմից՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարության մշակման և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավման գործողությունների ծրագրման համատեքստում:

Ատենախոսության շրջանակում արծարծված հարցերը և եզրահանգումները նաև կարող են հիմք հանդիսանալ ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող այլ մասնագետների կողմից հետագա հետազոտությունների իրականացման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության արդյունքները քննարկվել են ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի նիստերում, ինչպես նաև «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» միջազգային 5-րդ գիտաժողովում: Հետազոտության հիմնական դրույթների շուրջ իրականացվել են աշխատանքային քննարկումներ Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների և բանկային համակարգի համապատասխան մասնագետների հետ:

Հետազոտության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հրատարակված վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 128 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից ու բացթողումներից: Դրանցից հատկանշական են հետևյալները.

1. Ատենախոսության 2.1 ենթահարցում հեղինակի կողմից մեծածավալ վիճակագրական տվյալներ են ներկայացվել ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի դինամիկայի վերաբերյալ, մասնավորապես՝ ՓՄՁ ոլորտի քանակային ցուցանիշները, տնտեսության մեջ ոլորտի ունեցած ներդրումը բնութագրող ցուցանիշները, ինչպես նաև ոլորտի բնութագրական գծերն արտացոլող ցուցանիշները: Այնուամենայնիվ, բոլոր վիճակագրական տվյալներն ավարտվում են 2018թ.-ի հունվարի 1-ով: Անշուշտ աշխատանքը կշահեր, եթե աշխատանքում ներառվեին ավելի թարմ տվյալներ:
2. Աշխատանքի 3.2 ենթահարցում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման նպատակով հեղինակի կողմից առաջարկվող գործիքակազմի տարրերից է գրավային պահանջների մեղմացումը: Անշարժ և այլ գույքի գրավը բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից լայնորեն կիրառվում է որպես վարկերի վերադարձելիության ապահովման և ռիսկերի զսպման էական գործիք: Հեղինակի կողմից առաջարկ է արվում տարբեր գործիքների միջոցով մեղմացնել գրավային պահանջները և ընդլայնել այլընտրանքային ապահովությունների կիրառությունը: Կարծում ենք, այս մոտեցումը վիճելի է, քանի որ հաշվի չեն առնվել ռիսկերի կառավարման խնդիրները, ինչպես նաև բացակայում է վերլուծությունը, թե որքանով նման մոտեցումը կարող է հանգեցնել ֆինանսական համակարգում ռիսկերի մեծացմանը վարկերի վերադարձելիության և ՓՄՁ-ների վարկային պարտավորությունների ժամկետանցների ավելացման տեսանկյունից:
3. Աշխատանքի 1.3 ենթահարցում հեղինակի կողմից ներկայացված վերլուծությունից պարզ է դառնում, որ ՓՄՁ-ների ֆինանսավորման աղբյուրները բազմազան են, սակայն աշխատանքի 2.3 ենթահարցում ՀՀ ՓՄՁ-ների ֆինանսավորման առկա հնարավորությունները քննարկելիս հեղինակն անդրադարձ է կատարել միայն բանկային ֆինանսավորմանը: Կարծում ենք, վերլուծությունը ավել արժեքավոր կլիներ, եթե

հեղինակն անդրադառնար նաև մեր երկրում ֆինանսավորման այնպիսի աղբյուրներին, ինչպիսիք են արտասահմանյան զարգացման ֆոնդերը, վենչուրային ֆինանսավորումը, բիզնես հրեշտակները և դրանց զարգացման հիմնահարցերին:

4. Հեղինակի կողմից ատենախոսության 3.3 ենթահարցում առաջարկվել է նորարարական ֆինանսավորման պրոդուկտ, որը նախատեսում է երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափերի նախահաստատում՝ առանց անշարժ գույքի գրավադրման: Պրոդուկտը ներդրվել է ՀՀ բանկերից մեկում, սակայն հեղինակի կողմից չի ներկայացվել այդ պրոդուկտի՝ բանկային համակարգում ընդհանուր ներդրման և տարածման համար անհրաժեշտ գործիքակազմ:

5. Հեղինակի կողմից ատենախոսության շրջանակներում անդրադարձ չի կատարվել ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության բարելավման ոլորտում աշխարհի այլ երկրների կողմից իրականացվող քաղաքականությանը և հաջողություններին: Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից ուսումնասիրվեր այլ երկրների հաջողված փորձը այդ բնագավառում և մեր երկրում դրանց ներդրման հնարավորությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից նշված դիտողություններով հանդերձ, ներկայացված ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն, այն ինքնուրույն հետազոտություն է, իսկ հեղինակի կողմից դրված և լուծված են հանրապետության համար կարևորագույն խնդիրներ:

Կարլեն Արմենի Մարգարյանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման հասանելիության բարելավման խնդիրները ՀՀ-ում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (20.04.2020թ., արձանագրություն թիվ 3):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Բ. Գաբրիելյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Մ. Մանուչարյան**

Տնտեսագիտության թեկնածուներ Բ. Գաբրիելյանի և Մ. Մանուչարյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք. Յու. Բաղդասարյան**
«20» ապրիլի 2020թ.